

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ
<<ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ>> ՄՐՑՈՒՅԹԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի, <<Մանկապատանեկան սպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ, 1.19-րդ կետերի և 2004թ. մայիսի 20-ի ՆԿ-113-Ն կարգադրության պահանջներով

Կարգադրում եմ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթի տարածքային և մարզային փուլերը կազմակերպելու և անցկացնելու կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթի մարզային փուլի մրցավարական հանձնաժողովի կազմը՝ համաձայն N2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթի տարածքային և մարզային փուլերը կազմակերպելու և անցկացնելու ժամանակացույցը՝ համաձայն N3 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի վարիչ Ս. Յոզղլակյանին՝ միջոցառումների անցկացման գործընթացն իրականացնելու համար ապահովել սույն կարգադրության և նրա հավելվածների, միջոցառման կանոնակարգի բազմացումը և առաքումը մարզի համայնքներ:

3. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ա. Մելքոնյանին՝ ապահովել մրցույթի տարածքային և մարզային փուլերի մրցումներին մասնակից ընտանիքների առաջին բժշկական օգնությունը:

4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներին՝ ապահովել բնակչության ու կազմակերպությունների ակտիվ մասնակցությունը Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթին և մրցույթի տարածքային փուլում հաղթած ընտանիքների մասնակցությունը մարզային փուլին:

5. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Խլիլայանին:

6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ԺՊ՝

Ա.ՀԱԿՈԲՅԱՆ